ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ

2021-2023թթ. ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր իրականացված փոխանցումների վերաբերյալ (հունվար-հոկտեմբեր)





2023թ. հունվար-հոկտեմբերին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացվել է 1 տրլն 877.6 մլրդ դրամ, ինչը 122.7 մլրդ դրամով կամ 7 %-ով ավել է 2022թ. և 1005.6 մլրդ դրամով կամ 115.3 %-ով ավել է 2021թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից, իսկ 2022թ. հունվար-սեպտեմբերի ցուցանիշից ավել է 371,7 մլրդ դրամով կամ 24.7%-ով: 2023թ. հունվար-հոկտեմբերին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց կողմից արտերկիր է փոխանցվել 1309.2 մլրդ դրամ, ինչը 435.9 մլրդ դրամով կամ 49.9 %-ով ավել է 2022թ. և 812.5 մլրդ դրամով կամ 163.6 %-ով ավել է 2021թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից, իսկ 2022թ. հունվար-սեպտեմբերի ցուցանիշից ավել է 553.2 մլրդ դրամով կամ 73.2%-ով: 2023թ. հունվար-հոկտեմբերին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և արտերկիր փոխանցված դրամական միջոցների զուտ ներհոսքը կազմել է 568.4 մլրդ դրամ,ինչը 313,2 մլրդ դրամով կամ 35.5%-ով պակաս է 2022թ. և 193.1 մլրդ դրամով կամ 51.5 %-ով ավել է 2021թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից, իսկ 2022թ. հունվար-սեպտեմբերի ցուցանիշից պակաս է 181.5 մլրդ դրամով կամ 24.2%-ով:

2023թ. հունվար-հոկտեմբերին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացվել է 4 մլրդ 807.6 մլն դոլար, ինչը 802.8 մլն դոլարով կամ 20 %-ով ավել է 2022թ. և 3 մլրդ 85.4 մլն դոլարով կամ 179,2 % -ով ավել է 2021թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից, իսկ 2022թ. հունվար-սեպտեմբերի ցուցանիշից ավել է 1 մլրդ 346 մլն դոլարով կամ 38.9%-ով: 2023թ. հունվար-հոկտեմբերին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց կողմից արտերկիր է փոխանցվել 3 մլրդ 351.8 մլն դոլար, ինչը 1 մլրդ 201.9 մլն դոլարով կամ 55.9 %-ով ավել է 2022թ. և 2 մլրդ 372.5 մլն դոլարով կամ 242.3%-ով ավել է 2021թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից, իսկ 2022թ. հունվար-սեպտեմբերի ցուցանիշից ավել է 1 մլրդ 619.8 մլն դոլարով կամ 93.5%-ով: 2023թ. հունվար-հոկտեմբերին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և արտերկիր փոխանցված դրամական միջոցների զուտ ներհոսքը կազմել է 1 մլրդ 455,8 մլն դոլար, ինչը 399.1 մլն դոլարով կամ 21.5 %-ով պակաս է 2022թ. և 712.8 մլն դոլարով կամ 95.9 %-ով ավել է 2021թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից, իսկ 2022թ. հունվար-սեպտեմբերի ցուցանիշից պակաս է 273.7 մլն դոլարով կամ 15.8%-ով:

*** Տեղեկատվության համար աղբյուր են հանդիսացել Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի ինտերնետային կայքի արտաքին հատվածի վիճակագրության հրապարակումները՝ ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր իրականացված փոխանցումների վերաբերյալ**